ՀՈՐՆ ՈՒ ՄՈՐԸ ԾԱԽՈՂ ՏՂԻ ՀԵՔԻԱԹԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Ժամանակով մի քաղաքում մի քյասիբ մարդ ա ըլում, ունենում ա մի տղա։ Տղին տալիս ա ուսումնարան։ Դա գնում ա ըտի կարդում է, իրան ուսումը ավարտում ա, գալի տուն։
Հերն ասում ա.— Հըլե չվել չալիշ էկա, որ դու ուսումդ սըվորեցիր, ըստիան եդը դու մեզ պետք ա պըհես։
Տղեն ասում ա.— Կըպըհեմ։
Մի քանի օրից եդը տղեն միտք ա անում, թե ինչ անեմ, որ դըրանց լավ պահեմ։ Գնում ա քաղաքը ման գալի, դես-դեն՝ իրան խելքի կտրած մի բան չի գտնում։
Մի օր ասում ա.— Ապի՛, արի մենք քոչենք էս քաղաքիցը, գնանք ուրիշ թաքավորի քաղաք։ Թե չէ՝ ես քաղաքը մի քյասիբ քաղաք ա, մենք կարալ չենք, որ ըստի ապրենք։
Հերն ասում ա.— Դու գիտես, որդի՛, ոնց որ լավն ա՝ հընե արա։
Այինօյին բան ու ման ունեին, ծախեցին ու վեկացան, դուս էլան էդ քաղաքիցը։ Շատ գնացին, թե քիչ՝ էդ աստված ա գիդում։ Գնացին հասան մի թաքավորի քաղաք։
Տղեն ասավ.— Ապի ջա՛ն,— ասավ,— նանի ջա՛ն, էկեք ձեզ մի խելոք բան ասեմ, ես կտանեմ ձեզ էս թաքավորի վրա՝ ոնց որ ըլի, կըծախեմ, թե թանգ, թե էժան։
Հերն ու մերը ասին.— Ա՜յ որդի, մենք հենց գիտացինք, թե մեզ պըհել պտիս։ Բերել ես, որ էս քաղաքումը թաքավորի վրա ծախե՞ս։
Ասավ.— Ապի ջա՛ն, ես որ ձեզ պահելիս չի լեմ, կտանեմ ձեզ մի բեվեճ մարդի վրա կծախեմ, ամա ձեզ հենց օքմու տալիս եմ, որ ոչ սոված կենաք, ոչ տկլոր ու բոբիկ։
Ասավ.— Եփոր ծախում ես մեզ, սոված էլ կըլինք, բոբիկ էլ։
Տղեն ասավ.— Ա՜յ, խելքներուդ էդդդար ա։ Թաքավորը հենց մարդ ա, որ իրան դուլլուղ անող մարդուն յա բոբիկ պահի, յա սոված պըհի՞։ Էկեք դուք ինձ լսեցեք, գնացեք ըտի, թաքավորի հացը կերեք ու կացեք, ես էլ կերթամ միչումը ման կգամ, մի բան կըճարեմ, ձեզ ըտի թողուլ չեմ, կգամ թաքավորի հարկը կտամ ու ձեզ կտանեմ։
— Դե դու գիտես, որդի՛, ոնց որ գիտես լավն ա՝ ընենց արա։
— Դե դուք ըստի կացեք, ես գնամ թաքավորի կուշտը։
Գնաց, գլուխ էրետ թաքավորին, կագնեց։
Թաքավորն ասավ.—
Ի՞նչ դուլլուղ ունիս, ասա։
— Թաքավորն ապրած կենա,— ասավ,— ես մի ջահել հերնումեր ունիմ։ Թե կառնես, արի առ, թանգ թե էժան, ոնց որ ուզես՝ ընենց էլ կտամ։
Թաքավորն ասավ.— Գնա՛ հլա բի տենամ հորդ ու մորդ։
Գնաց ու էբեր։ Մտիկ արավ թաքավորը, տեհավ, որ լավն են, իրանց կարան դուլլուղ անեն։
— Ասա՛,— ասավ,— ա՛յ տղա ինչ ես ուզում, ինչ որ ուզես՝ տալ պտիմ։
Տղեն ասավ.— Թաքավորն ապրած կենա, շատ չեմ ուզիլ, մորս կտաս մի ձեռք շոր, ինչ թավուր ես կուզեմ, հորս էլ կտաս մի լավ ձի, հարիր մանեթ էլ փող կբախշես ինձ։
Նազըրին կանչեց թաքավորը, ասավ.— Էս տղին տարեք դարզու կուշտը, ինչ թավուր շոր որ կուզի, ասեք՝ կարի տա դրան։
Գնաց, ինչթավուր որ շոր ուզեց՝ կարեց, էրետ իրան։ Վի կացան, էկան։ Տարավ թավլեն, ասավ.— Ո՛ր ձին ուզում ես՝ վեկալ։

Մի լավ ձի ջոկեց, քաշեց դուրս էբեր։ Թաքավորն էլ հարուր մանեթ փող բախշեց իրան։ Բարեխութեն արավ հորն ու մորը հետ, գլուխ էրետ թաքավորին ու ձին քշեց, գնաց։ Գնաց, ճամփումը տեհավ մի թաքավորի տղա ա գալի։
— Բարի աջողո՛ւմ,— ասավ թաքավորի տղեն։
Ասավ.— Ասսու բարին քի՛։
— Ա՛յ մարդ,— ասավ,— ո՞րդի ես գնում։
Ասավ.— Թաքավորի տղա՛, ես գնում եմ, էն ֆըլան թաքավորի ախչիկը ուզիլ պտիմ։
Ասավ.— Շատ լավ պտես անի, ես է՛ն թաքավորի տղեն եմ. արի քեզ մի թուղթ տամ, թե՝ է՛ս ճամփումը էդ տղին տեհել եմ ու հըվանել եմ, թե իրիկունը գա, թե ռավոտը գա իմ քիրը որ ուզի՝ էլ չէ չասեք, տալ պըտեք։
— Շա՛տ լավ կանես,— ասավ,— թաքավորի տղա, որ ըտենց թուղթ տաս։
Էբեր ու մի թուղթ գրեց, էրետ էն տղին, էդիր գդակի ծալումը ու գնաց։
Գնաց մի դզում շատ ծըրավեց, տեհավ ճամփի ղրաղին մի ջրհոր կա։ Ջիուցը վեր էկավ, որ էն ջրհորիցը ջուր խմի, կռացավ, որ ջուր խմի՝ գդակի ծալիցը թուղթն ընկավ ջուրը։ Թուղթը բաց արավ, տեհավ թե գրած ա. «Ռիգունը գա՝ ռիգունը, ռավոտը գա՝ ռավոտը էս մարդի գլուխը կտրեցեք»։ Թուղթը պատռոտեց ու դեն ածավ։ Ճամփա ընկավ գնաց։ Գնաց էդ թաքավորի քաղաքումը մի պառավի տան ղոնաղ ընկավ, էն քշերը պառավի կշտին կացավ։ Պըռավին հըրցուց, թե.— Էս ձեր թաքավորի ախչիկը ի՞նչ թավուր ախչիկ ա։
Պառավն ասավ.— Ա՛յ որդի, ի՞նչ ես անում թաքավորի ախչիկը։
— Դեդի՛,— ասավ,— էկել եմ, որ էդ ախչիկը ուզիլ պտիմ։
Պառավն ասավ.— Ա՛յ որդի, հեռու կաց էդ ախչկանիցը։ Էդ ախչիկը հարըրից մի ջան պակաս գլուխը կտրել ա։
Հարցրուց թե.— Խի՞ ա կտրել։
Պառավն ասավ.— Իրեք խոսք ունի, ասում ա՝ ով որ գտնի, պետք է նրան ուզեմ, որ գտնի ոչ՝ գլուխը պետք ա կտրեմ։
Ասավ.— Կտրում ա, թող կտրի, ես պետք ա գնամ ուզեմ դրան, տենամ ինչ թավուր խոսք պտի ասի, որ ես կարալ չպտիմ գտնուլ։
Ռավոտը տղեն վի կացավ, գնաց թաքավորի ախչկա կուշտը։
— Բարի լիս քի՛,— ասավ,— խանո՛ւմ։
— Ասսու բարին քի՛, բարով էկար, համեցեք ըստի։
Նստեց։ Ախչիկն ասավ.— Ասա՛ տենամ, ղուլլուղդ ի՞նչ ա։
Ասավ.— Թաքավորի ախչի՛կ, էկել եմ քեզ ուզելու։
— Ա՛յ տղա, դու գիտես ո՞չ, որ ես իրեք խոսք ունեմ, էն խոսքերը չվել գտնեն ոչ՝ ինձ կարալ չեն ուզի։
Ասավ.— Ասա՛, թաքավորի ախչիկ, էն խոսկերքը, տենա՛նք։
Ասավ.— Շատ եմ ասել, գտել չեն, ամենի գլուխն էլ կտրել եմ, հարըրից մի ջան պակաս ա։
— Վնաս չունի՛,— ասավ,— թաքավորի ախչի՛կ, եթե գտնեմ ոչ՝ իմ գլուխն էլ կտրի։
— Աչքի՛ս վրա,— ասավ,— կասե՛մ։
Տղեն ասավ.— Թաքավորի ախչիկ, դուն իրեքը պտես ասի, ես էլ մինը պտեմ ասի։ Թե ես քու իրեք խոսքը գտնում ոչ իմ գլուխը կտրի, որ դո՛ւ իմ մի խոսքը գտնուս ոչ...
— Դո՛ւ իմ գլուխը կտրի,— ասավ ախչիկը։
Տղեն ասավ.— Շա՛տ լավ։
Ախչիկն ասավ.— Դե գնա, ռավոտն արի՝ ասեմ։
Գնաց, ռավոտը տղեն էկավ, ասավ.— Թաքավորի ախչիկ, դե ասա տենամ։

Թաքավորի ախչիկն ասավ.— Աշխարքիս էրեսին ի՞նչն ա շատ թեթև։
Տղեն ասավ, թե.— Իսանի խելքի պես թեթև բան չկա։
— Դուզ,— ասավ,— էդ ա։
— Դե՛,— ասավ,— էն մինն էլ ասա։
Ասավ.— Չէ՛, գնա, ռավոտն արի, էն մինն էլ ընդով կասեմ։
Գնաց, ռավոտն էկավ։
Ախչիկն ասավ.— Աշխարքիս էրեսին ի՞նչն ա շատ ծանդրը։
— Ա՛յ,— ասավ,— իսանի խելքի պես աշխարքի էրեսին ծանդրը բան չկա։
— Էդ ո՞նց ա,— ասում է ախչիկը,— որ մի իսանը համ ծանդրը խելք ունի, համ թեթև։
— Ըտենց չէ՛, թաքավորի ախչիկ, աշխարհում մի իսան չկա, էրկու իսան ա. մինը կա, որ շատ թեթև խելք ունի, մինը կա, որ Լալվարու սարերը քաշում ա խելքով։
— Ապրե՛ս,— ասավ,— ա՛յ տղա, դրուստ ըտոնք են։
— Դե,— ասավ,— ասա էն մինն էլ։
— Գնա՛,— ասավ,— էգուց կըգաս, կասեմ էն մինն էլ։
Տղեն գնաց, ռավոտը լիսացավ, էկավ։
— Ասա՛,— ասավ,— թաքավորի ախչիկ, դե՛։
Ասավ.— Ա՛յ տղա, աշխարքիս էրեսին ի՞նչն ա շատ եգին։
— Թաքավորի ախչիկ,— ասավ,— էն մարդի խելքը որ թեթև ա, նա կասի՝ աչքն ա եգին, ո՛ր մարդի խելքը շատ ծանդրն ա, նա կասի՝ միտքն ա եգին։ Ա՛յ ըստի նըստած ենք, համա, միտքս սաղ աշխարքում ման էկավ, էլի էկավ ըստի։
Ախչիկն ասավ.— Ղո՛չաղ տղա, ազատեցիր գլուխդ։ Դե ասա քու մի խոսքդ, տենանք ի՞նչ ա։
Տղեն ասավ,— Չէ՛, ռավոտը կգամ, կասեմ։
Տղեն գնաց ու ռավոտն էկավ։
— Դե՛,— ասավ,— ասա՛, այ տղա։
— Թաքավորի ախչիկ,— ասավ,— էն ի՞նչ մարդ էր, որ մորը հաքավ, հորը վեր էլավ, կռացավ, որ ջուր խմի՝ իրան մահն ընկավ աղաքը։
Թաքավորի ախչիկը մնաց ըրմացած։
Խելքը մի բան չի կտրեց։
Ասավ.— Ա՛յ տղա, գնա ռավոտը կգաս, քեզ մի պատասխան կտամ։
Տղեն գնաց։ Ախչիկը շատ մտքի եդնա ընկավ, տեհավ, որ դա գտնելու բան չի։ Ասավ. «Ես որ մի ուստութին չանեմ, էդ տղեն ռավոտը իմ գլուխը տալ պտի»։
Վե կացավ, շորերը փոխեց, օխտն ախչիկ գլխին հըվաքեց, առավ գնաց էն տղի կուշտը։ Գնաց, իրար հետ հաց կերան, էդ տղին հարփացրուց, ախչկերանցը ճամփու էրետ, գնացին, ինքը մնաց կշտին, եդնեն ընկավ, հարփած մարդ էր, հարցրուց, թե. «Թաքավորի ախչկան ի՞նչ ես ասել, որ ըտենց նեղն ես զցել»։
Հարփած էր, գլխի չընկավ, ասավ.— Ես եմ, որ մորս ծախեցի՝ շորի տվի, հորըս էլ ծախեցի՝ ձիու տվի, վեր էլա, էկա մի տղի ռաստ էկա, մի գիր տվեց, դրի գդակիս ծալումը, էկա, կռացա, որ ջուր խմեմ, վեր ընկավ՝ ընկավ ջուրը, վի կալա կարդացի, տեհա, որ գրել ա, թե. «Ռիգունը գա՝ ռիգունը, ռավոտը գա՝ ռավոտը կտրեցեք էդ տզի գլուխը»։ վեկալա պատռեցի։
Ախչիկն էդ բաներն իմացավ, տղին խափեց ու դուրս էլավ, փախավ գնաց իրան տունը։
Տղեն ռավոտը վի կացավ, տեհավ, որ իրան խափել են, հարփացրել են ու էդ բաները իմացել, մտքի եդնան ընկավ ու մոլորվեց։ Բալիշը վի կալավ, որ դնի ընդի, տեհավ ախչկա փոխանը բալըշի տակին, «Ջա՛ն,— ասավ,— պրծա»։

Վի կալավ ու էդիր ծոցումը ու գնաց թաքավորի ախչկա կուշտը։ Ախչիկը չգիտեր, թե փոխանը մնացել ա։ Հացկերույթ սարքեց ու շատ օքմին հավաքեց, որ տղի գլուխը կտրել տա։ Տեհավ տղեն էկավ, ուրախտուրախ նստեց, ասավ.— Թաքավորի ախչիկ, գտա՞ր։
— Հա՛, գտա։
— Ի՞նչ ա, որ գտար։
— Էն դուն ես, որ մորդ ծախել ես՝ շորի տվե, հորդ էլ ծախել ես՝ ձիու տվե։
— Դրուստ ա,— ասավ,— ի՞նչ ես ուզում հմի անես։
— Էս սհաթին գլուխդ կտրիլ պտիմ տա։
— Փեշքա՛շ ա, թաքավորի ախչիկ, դեհ մի բան ասեմ, ու կտրիլ տու։ Ես քշերս մի հավ էփեցի, դրի դաքիս, որ ուտեմ, ինքը թռավ, փախավ, փետուրը մնաց ձեռիս։ Թե հավատում չեք՝ ա՛յ փետուրը,— ասավ ու ձեռը տարավ ծոցը, որ փոխանը հանի, ախչիկը տեհավ, ձեռիցը խլեց, թե՝ էլ շանց մի տալ, հըվատացինք, ինձ էս տղի հետ պսակեցեք։
Էն սըհաթն էվեթ թաքավորը զուռնա-դհոլ էբեր, տարավ պսակը ժամը՝ օխտն օր, օխտը քշեր հըրսանիք արավ, հասցրուց իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։
Էդ տղեն թաքավորի աչքին հենց դիր էկավ, որ կես թաքավորութինը բախշեց, կես թաքավորութենի հող, կես թաքավորութենի էլ ղոշուն։
Տղեն վի կացավ մի օր կնկանն ասավ.— Ես հերն ու մեր ունեմ ծախված, գնամ ազատեմ, բերեմ։
Գնաց էն թաքավորի կուշտը։
— Թաքավորն ապրած կենա,— ասավ,— խնդրում եմ, որ իմ հերն ու մերը ինձ տաս, լավ բոլ քեզ ծառայութին արին, ա՛ռ քու հարիր մանեթը, էս էլ քու ձին, էս էլ քու շորերի հախը։
— Դե տար, որդի՛,— ասեց թաքավորը։
Վի կալավ հորն ու մորը, էբեր իրան տուն, ասավ.— Բա որ ասում էի, թե ձեզ կպըհեմ, տեհա՞ք, որ հըմի կպըհեմ։
Բարին ըստի, չարին ընդի։ Աստծանե իրեք խնձոր վեր գա. մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ ալամ աշխարքին։